(19) **ԱՄ**

(51) **ՄԱԴ (2024.01)**
A61K 6/00
A61K 31/00
A6IK 47/00

Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գրասենյակ

ԳՅՈՒՏԻ ԼՐԻՎ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ (11) 865 Y

(21) Հայտի համարը **AM20230089Y**
(22) Հայտի Ներկայացման թվականը **08.11.2023**
(45) Հրապարակման ամսաթիվը **16.02.2024**
(56) **Carr et al. Evaluation of a Transoral Delivery System for Topical Anesthesia. The Journal of the American Dental Association. Vol. 132, American Dental Association, 2001, 1714-1719**
(72) Գյուտի հեղինակը, երկրի կոդը **Արուսյակ Ժամհարյան (AM), Շուշանիկ Աֆրիկյան (AM), Հակոբ Թոփչյան (AM), Աննա Ավետիսյան (AM), Արտակ Հեբոյան (AM)**
(71) Հայտատուն, երկրի կոդը **Արուսյակ Ժամհարյան (AM), Շուշանիկ Աֆրիկյան (AM)**
(73) Արտոնագրատեր, հասցեն, երկրի կոդը **Արուսյակ Ժամհարյան (AM), Շուշանիկ Աֆրիկյան (AM)**

(54) Բուժիչ թաղանթ բերանի խոռոչի համար

(57) Գյուտը վերաբերում է դեղագործության բնագավառին, մասնավորապես՝ լիդոկային պարունակող օրալ ադհեզիվ բուժիչ թաղանթներին բերանի խոռոչի համար, որը կարող է կիրառվել ստոմատոլոգիայում՝ բերանի լորձաթաղանթի վնասվածների, խոցերի և աֆթաների բուժման նպատակով: Բուժիչ թաղանթ բերանի խոռոչի համար ունի ակտիվ դեղաբանական բաղադրիչ պարունակող ադհեզիվ հատկություններով շերտ, որը պարունակում է լիդոկայինի հիդրոքլորիդ, սննդային ժելատին, գլիցերին, ջուր, համի կարգավորիչ, լրացուցիչ պարունակում է 1:10 հարաբերակցությամբ վերցված ակնամոմի սպիրտային էքստրակտ, իսկ որպես համի կարգավորիչ վերցված է մասուրի օշարակ, բաղադրամասերի հետևյալ հարաբերակցությամբ, զանգվ. %. լիդոկայինի հիդրոքլորիդ՝ 3.0 – 4.0, սննդային ժելատին՝ 22.0 - 26.0, լիցերին՝ 33.0 - 37.0, ակնամոմի սպիրտային էքստրակտ՝ 23.0 - 27.0, մասուրի օշարակ՝ 8.0 – 12.0 և ջուր՝ մնացածը:

Ստեղծվում է տեղային կիրառվող նոր բաղադրությամբ օրալ ադհեզիվ թաղանթ, որն ունի բարձր ցավազրկող ազդեցություն և ֆունկցիոնալ դեղաբանական հատկություններ: